- 1.1. «ԼԵՆԴՄԱՐԿ ԿԱՊԻՏԱԼ» փակ բաժնետիրական ընկերությունը (այսուհետ՝ Ընկերություն) հանդիսանում է առևտրային կազմակերպություն հանդիսացող իրավաբանական անձ, որի կանոնադրական կապիտալը բաժանված է Ընկերության եկատմամբ բաժնետերերի պարտավորական իրավունքը հավաստիացնող որոշակի թվով բաժնետոմսերի, որոնք բաշխվում են միայն նրա էմիսիայի ընդհանուր կամ նախապես որոշված այլ անձանց միջև:
- 1.2. Ընկերության իրավունակությունը ծագում է նրա ստեղծման (պետական գրանցման) և դադարում է լուծարման ավարտի (լուծարման մասին ներդրումային ընկերությունների գրանցումների մատյանում գրառման) պահից:
- 1.3. Ընկերությունն ունի իր ֆիրմային անվանամբ կլոր կնիք (հայերեն, ռուսերեն և անգլերեն գրառումներով), դրոշմներ և բլանկեր, ինչպես նաև ֆիրմային այլ ռեկվիզիտներ:
- 1.4. Ընկերությունը իր գործունեության ընթացքում ղեկավարվում է ՀՀ Քաղաքացիական Օրենսգրքով (այսուհետ՝ Օրենսգիրք), «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքով (այսուհետ՝ Օրենք), «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքով, ՀՀ օրենսդրական այլ ակտերով և սույն կանոնադրությամբ:
- 1.5. Ընկերության բաժնետերերի և Ընկերության միջև հարաբերությունները կարգավորվում են սույն կանոնադրությամբ, Օրենսգրքով, Օրենքով և այլ իրավական ակտերով:
- 1.6. Ընկերության ֆիրմային անվանումն է՝ հայերեն լրիվ՝ «ԼԵՆԴՄԱՐԿ ԿԱՊԻՏԱԼ» Փակ բաժնետիրական ընկերություն, ռուսերեն լրիվ՝ Закрытое акционерное общество «ЛЭНДМАРК КАПИТАЛ» անգլերեն լրիվ՝ LANDMARK CAPITAL Closed joint stock company
- 1.7. Ընկերության գտնվելու վայրը և իրավաբանական (փոստային) հասցեն է՝ Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, Վազգեն Սարգսյան 10, 118 տարածք, Երևան, 0010:
- 1.8. Ընկերության միակ բաժնետերն է հանդիսանում ԼԵՆԴՄԱՐԿ ԳՈՒՂԻՆԳ ԱՐՄ ընկերությունը (Պետ օձգիստրի համար՝ 286.110.1253735, տրված՝ 21.07.2022 թ., ԳԳ Արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական օձգիստր, հասցեն՝ Վազգեն Սարգսյան փ. 10, 118 տարածք, 0010 Երևան, Հայաստանի Հանրապետություն):

2. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ ՈՒ ՂՊԱՏԱԿՆԵՐԸ

- 2.1. Ընկերության ստեղծման նպատակն է ներդրումային ծառայությունների մատուցման և «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքով թույլատրված այլ գործունեության իրականացման (ոչ էմիսիայի ծառայություններ) միջոցով շահույթի ստացումը:
- 2.2. Ընկերության հիմնական գործունեությունն է հաճախորդներից արժեթղթերով գործարքների կտտարման հանձնարարականների ընդունումը և հաղորդումը, իր կամ հաճախորդի անունից և հաճախորդի հաշվին արժեթղթերով գործարքների կատարումը, արժեթղթերում ներդրումների հետ կապված խորհրդատվության տրամադրումը հաճախորդներին, արժեթղթերի չնբաշխավորված տեղաբաշխման իրականացումը, իր հաշվին և իր անունից արժեթղթերով գործարքների կատարումը և արժեթղթերի փաթեթի կառավարումը:
- 2.3. Ընկերության ոչ էմիսիայի գործունեությունն է արժեթղթերի թողարկման և տեղաբաշխման կազմակերպման հետ կապված ծառայությունների մատուցում, խորհրդատվության տրամադրումն ընկերություններին կապիտալի կառուցվածքի, կորպորատիվ ռազմավարության հարցերի վերաբերյալ, ընկերությունների վերակազմակերպման հետ կապված խորհրդատվական և այլ ծառայությունների մատուցումը, արժեթղթերի թողարկման և տեղաբաշխման կազմակերպման հետ կապված

ծառայությունների մատուցումը, ինչպես նաև արտարժույթի դիլերային առք ու վաճառքի գործառնությունների իրականացումը, արժեթղթերով գործարքների հետ կապված հետազոտությունների, ֆինանսական վերլուծությունների և այլ ընդհանուր ներդրումային առաջարկությունների կազմումը և տարածումը, արժեթղթերի պահառությունը:

2.4. «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքով սահմանված գործունեության առանձին տեսակներով Հնկերությունը կարող է զբաղվել միայն լիցենզիայի (հատուկ թույլտվության) առկայության դեպքում՝ լիցենզիա ստանալու պահից:

2.5. Հնկերությունը իր գործառնություններն իրականացնում է բացառապես անկանխիկ ձևով:

3. ՀԱԿԵՐՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՎԻՃԱԿԸ, ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ Ու ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Հնկերությունը առևտրային կազմակերպություն հանդիսացող իրավաբանական անձ է Հնկերությունը, որպես սեփականություն, ունի առանձնացված գույք և իր պարտավորությունների համար պատասխանատու է այդ գույքով:

3.2. Հնկերությունը կարող է իր անունից կնքել պայմանագրեր, ձեռք բերել ու իրականացնել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտականություններ, դատարանում հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող:

3.3. Հնկերությունը ունի ինքնուրույն հաշվեկշիռ, հաշվարկային հաշիվներ (դրամով, տարադրամով) բանկերում:

3.4. Հնկերությունը կարող է լինել այլ ընկերության (այդ թվում դուստր և կախյալ ընկերակցության) հիմնադիր (մասնակից) բացառությամբ Օրենսգրքով, Օրենքով և այլ օրենքներով նաժարտեված դեպքերի:

4. ՀԱԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ, ԱՅՈՒ ԿԱՊԻՏԱԼՆԵՐ ԵՎ ԱԿՏԻՎՆԵՐ

4.1. Հնկերության կանոնադրական կապիտալը սահմանում է պարտատերերի շահերը երաշխավորող Հնկերության գույքի նվազագույն չափը: Հնկերության կանոնադրական կապիտալը կազմվում է բաժնետերերի ձեռք բերած բաժնետոմսերի անվանական արժեքից:

4.2. Հնկերության կանոնադրական կապիտալը կազմում է 436,815,000 (չորս հարյուր երեսուցվեց միլիոն ութ հարյուր տասնհինգ հազար) ՀՀ դրամ, որը բաշխվում է 5139 (հինգ հազար հարյուր երեսուցվեց) հատ սովորական անվանական բաժնետոմսերի ձևով, յուրաքանչյուրը՝ 85 000 ՀՀ դրամ անվանական արժեքով: Բոլոր 5139 բաժնետոմսերը լրիվ վճարված են և պատկանում են ընկերության բաժնետերերին:

4.3. Հնկերությունը կարող է կանոնադրական կապիտալի չափը փոխել բաժնետերերի ընդհանուր ժողովի որոշմամբ, որն ուժի մեջ է մտնում սույն կանոնադրության մեջ համապատասխան փոփոխություններ կատարելուց և ՀՀ կենտրոնական բանկում օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով գրանցելու պահից:

4.4. Հնկերության կանոնադրական կապիտալի չափը կարող է մեծացվել Հնկերության բաժնետոմսերի անվանական արժեքի ավելացմամբ կամ լրացուցիչ բաժնետոմսերի տեղաբաշխմամբ, եթե նախկինում տեղաբաշխված բաժնետոմսերը լրիվ իրացված և վաճառված են:

4.5. Հնկերության բաժնետերերն ունեն Հնկերության կանոնադրությամբ սահմանված ժամկետի ընթացքում կանոնադրական կապիտալում իրենց բաժնին համապատասխան հոր բաժնետոմսերի ձեռք բերման նախապատվության իրավունք:

4.6. Լրացուցիչ բաժնետոմսերի տեղաբաշխման մասին որոշմամբ պետք է սահմանվի՝ ա) լրացուցիչ տեղաբաշխվող հասարակ (սովորական) բաժնետոմսերի քանակը՝ այդ բաժնետոմսերի հայտարարված քանակի սահմաններում:

բ) լրացուցիչ բաժնետոմսերի սեղաբաշխման ժամկետները և պայմանները, այդ թվում՝ Ընկերության բաժնետոմսերի ձեռքբերման նախապատվություն ունեցող բաժնետերերի և այլ արժեթղթերի սեփականատերերի միջև սեղաբաշխվող բաժնետոմսերի արժեքը:

4.7. Եթե նախկինում սեղաբաշխված բաժնետոմսերի արժեքի գումարը լրիվ վճարված չէ, ապա Ընկերությունն իր կանոնադրական կապիտալը չի կարող մեծացնել ֆինանսական միջոցների ներգրավման հաշվին:

4.8. Ընկերությունն իր գործունեության ֆինանսական արդյունքներն ամփոփելուց հետո կարող է սեղաբաշխված բաժնետոմսերի սնվանական արժեքի մեծացման միջոցով ավելացնել կանոնադրական կապիտալը՝

ա) շահույթի մի մասը փոխանցելով կանոնադրական կապիտալ:

բ) ընկերության զուտ ակտիվների (սեփական կապիտալի) արժեքից կանոնադրական կապիտալի և պահուստային կապիտալի ընդհանուր գումարը գերազանցող մասը լրիվ կամ մասնակի փոխանցելով կանոնադրական կապիտալ:

4.9. Ընկերությունն իրավունք ունի բաժնետերերի ընդհանուր ժողովում որոշում ընդունել կանոնադրական կապիտալը հետևյալ ձևերով նվազացնելու մասին՝

ա) բաժնետոմսերի անվանական արժեքի նվազեցմամբ:

բ) բաժնետոմսերի ընդհանուր քանակի կրճատմամբ, այդ թվում՝ Օրենքով նախատեսված դեպքերում, զրանց մի մասի ձեռքբերմամբ և մարմամբ:

4.10. Հիմնադիրների (բաժնետերերի) ավանդների հաշվին ստեղծված, ինչպես նաև, Ընկերության ձեռնարկատիրական գործունեության ընթացքում արտադրված և ձեռքբերված գույքը Ընկերությանն են պատկանում սեփականության իրավունքով:

4.11. Ընկերության զուտ ակտիվների արժեքը գնահատվում է հաշվապահական հաշվետվության տվյալներով՝ ՀՀ իրավական ակտերով սահմանված կարգով:

4.12. Ընկերությունում ստեղծվում է պահուստային (ապահովագրական) կապիտալ՝ կանոնադրական կապիտալի 15%-ի չափով: Պահուստի հատկացումները կատարվում են նախորդ ժամանակաշրջանի չբաշխված շահույթի 3%-ի չափով կատարվող տարեկան մասհանումների միջոցով՝ մինչև նախատեսված չափերին հասնելը:

4.13. Բաժնետերերի ընդհանուր ժողովի որոշմամբ Ընկերությունը կարող է ստեղծել նաև շահութաբաժինների վճարման, աշխատակիցների բաժնետիրացման, սպառման, կուտակման, սոցիալական զարգացման և այլ հիմնադրամներ:

5. ԲԱԺՆԵՏՈՄՍԵՐ ԵՎ ԱՅԼ ԱՐԺԵԹՂԹԵՐ

5.1. Ընկերությունը կարող է թողարկել և սեղաբաշխել՝

ա) բաժնետոմսեր

բ) սպարտատոմսեր

գ) «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքով սահմանված այլ արժեթղթեր

6. ԲԱԺՆԵՏԵՐՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

6.1. Հասարակ (սովորական) բաժնետոմսի սեփականատերը Օրենքի և Ընկերության կանոնադրությամբ համաձայն իրավունք ունի՝

ա) մասնակցել Ընկերության ընդհանուր ժողովին՝ վերջինիս իրավասությանը պատկանող բոլոր հարցերի նկատմամբ ձայնի իրավունքով:

բ) մասնակցել Ընկերության գործերի կատարմանը:

գ) ստանալ շահութաբաժիններ՝ Ընկերության գործունեությունից առաջացած շահույթից:

զ) առաջնահերթ կարգով ձեռք բերել Հնկերության կողմից տեղաբաշխվող բաժնետոմսերը, եթե Օրենքով և Հնկերության կանոնադրությամբ այլ բան նախատեսված չէ:

ե) ստանալ Հնկերության գործունեության վերաբերյալ ցանկացած տեղեկատվություն՝ գաշտնի ֆուտսթոքթերից բացի, այդ թվում՝ Հնկերության կանոնադրությամբ սահմանված կարգով ծանոթանալ հաշվառյալահական հաշվեկշիռներին, հաշվառվություններին, Հնկերության արտադրատեսակական գործունեությանը:

զ) Հնկերության տարեկան ժողովում իր իրավունքները ներկայացնելու համար լիազորել երրորդ անձի:

է) հանդես գալ առաջարկություններով Հնկերության բաժնետերերի ընդհանուր ժողովում:

զ) Հնկերության բաժնետերերի ընդհանուր ժողովում քվեարկել իրեն պատկանող բաժնետոմսերի ձայների չափով:

թ) հաղցով դիմել դատարան՝ Հնկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի կողմից ընդունված և գործող օրենքներին ու այլ իրավական ակտերին հակասող որոշումների բողոքարկման նպատակով:

ժ) Հնկերության լուծարման դեպքում ստանալ պարտատերերի հետ կատարված հաշվարկներից հետո մնացած Հնկերության զույքի իր հասանելիք մասը կամ դրա արժեքը:

ժա) Հնկերության միջոցների հաշվին Հնկերության կանոնադրական կապիտալի ավելացման դեպքում անվճար ստանալ համասլատասխան բանաբությամբ սովորական բաժնետոմսեր:

ժբ) օգտվել Հնկերության կանոնադրությամբ նախատեսված այլ իրավունքներից:

6.2. Հնկերության բաժնետերերն ունեն իրենց սեփականությունը հանդիսացող բաժնետոմսերը օտարելու կամ Օրենքով չարգելված ձևով այլ անձանց փոխանցելու իրավունք: Ընդ որում մյուս բաժնետերերը ունեն այդ բաժնետոմսերը նույն գևով ձեռքբերման նախապատվության իրավունք: Բաժնետերերի կողմից իրենց վաճառվող բաժնետոմսերի ձեռքբերման նախապատվության իրավունքը չիրականացնելու դեպքում Հնկերությունն ինքն ունի այդ բաժնետոմսերը սեփականատիրոջ հետ համաձայնեցված գևով ձեռք բերելու նախապատվության իրավունք:

6.3. Բաժնետերերի նախապատվության իրավունքի (այլ բաժնետիրոջ կողմից վաճառվող բաժնետոմսերի ձեռքբերման) իրականացման ժամկետը սահմանվում է 30 օր: Իր բաժնետիրոջ կողմից վաճառվող բաժնետոմսերի ձեռքբերման Հնկերության նախապատվության իրավունքի իրականացման ժամկետը սահմանվում է 30 օր:

6.4. Հնկերության նախապատվության իրավունքը չի կիրառվում Օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված դեպքերում:

6.5. Բաժնետերերը պարտավոր են՝

ա) կանոնադրությամբ սահմանված կարգով, չափերով, եղանակներով և ժամկետներում կատարել դրամական և գույքային ներդրումներ:

բ) չերապարակել Հնկերության գործունեության վերաբերյալ գաղտնի տեղեկություններ:

7. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՇԱՀՈՒԹԱԲԱԺԻՆՆԵՐԻ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

7.1. Հնկերությունն իրավունք ունի որոշում ընդունել (հայտարարել) տեղաբաշխված բաժնետոմսերի դիմաց եռամսյակային, կիսամյակային կամ տարեկան շահութաբաժինների վճարման մասին:

7.2. Շահութաբաժինները վճարվում են Հնկերության սովյալ տարվա ընթացիկ գուտ շահույթից կամ նախորդ ժամանակաշրջանների չբաշխված շահույթից:

7.4. Ըստ բաժնետոմսերի տեսակների և դասերի՝ միջանկյալ (եռամսյակային և կիսամյակային) շահութաբաժինների վճարման, շահութաբաժնի չափի և դրա վճարման ձևի մասին որոշումն ընդունում է բաժնետերերի ընդհանուր ժողովը: Ըստ բաժնետոմսերի տեսակների և դասերի՝ տարեկան շահութաբաժինների վճարման, շահութաբաժնի չափի և դրա վճարման ձևի մասին որոշումն ընդունում է ժողովը՝ անդամների առաջարկությամբ:

7.5. Եթե Հնկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի որոշմամբ տարեկան շահութաբաժինների չափն ըստ բաժնետոմսերի առանձին տեսակների և դասերի սահմանվում է արդեն վճարված միջանկյալ շահութաբաժինների չափին հավասար, ապա այդ տեսակների և դասերի բաժնետոմսերի դիմաց տարեկան շահութաբաժիններ չեն վճարվում:

7.6. Եթե Հնկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի որոշմամբ տարեկան շահութաբաժինների չափն ըստ բաժնետոմսերի առանձին տեսակների և դասերի սահմանվում է արդեն վճարված միջանկյալ շահութաբաժինների չափից ավելի, ապա այդ տեսակների և դասերի բաժնետոմսերի դիմաց տարեկան շահութաբաժինները վճարվում են սահմանված տարեկան շահութաբաժնի և տվյալ տարում արդեն վճարված միջանկյալ շահութաբաժինների գումարի տարբերությամբ:

7.7. Հնկերության բաժնետերերի ընդհանուր ժողովն իրավունք ունի որոշում ընդունել առանձին տեսակների և դասերի բաժնետոմսերի դիմաց շահութաբաժիններ չվճարելու կամ ոչ լրիվ չսփռվ վճարելու մասին: Այդ որոշումների գործողության ժամկետը սահմանվում է Հնկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի կողմից, բայց չի կարող մեկ տարուց ավել լինել:

7.8. Տարեկան շահութաբաժինների վճարման ամսաթիվը սահմանվում է Հնկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի տարեկան շահութաբաժիններ վճարելու մասին որոշմամբ: Միջանկյալ շահութաբաժինների վճարման ամսաթիվը սահմանվում է բաժնետերերի ընդհանուր ժողովի՝ միջանկյալ շահութաբաժիններ վճարելու մասին որոշմամբ, բայց ոչ շուտ, քան տվյալ որոշման ընդունման պահից 30 օր անց:

7.9. Շահութաբաժինների յուրաքանչյուր վճարման համար բաժնետերերի ընդհանուր ժողովը կազմում է շահութաբաժիններ ստանալու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակ, որում պետք է ընդգրկվեն՝

ա) միջանկյալ շահութաբաժիններ վճարելու դեպքում՝ Հնկերության այն բաժնետերերը, որոնք ընդգրկվել են Հնկերության բաժնետերերի ռեեստրում՝ բաժնետերերի ընդհանուր ժողովի միջանկյալ շահութաբաժիններ վճարելու մասին որոշման կայացման օրվանից առնվազն 10 օր առաջ:

բ) տարեկան շահութաբաժիններ վճարելու դեպքում՝ Հնկերության այն բաժնետերերը, որոնք ընդգրկվել են Հնկերության բաժնետերերի ռեեստրում՝ Հնկերության բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովին (այսուհետ՝ տարեկան ժողով) մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմելու օրվա դրությամբ:

7.10. Հնկերությունն իրավունք չունի որոշում ընդունել (հայտարարել) տեղաբաշխված բաժնետոմսերով շահութաբաժինների վճարման մասին, եթե՝

ա) լրիվ չի վճարվել կանոնադրական կապիտալը.

բ) շահութաբաժիններ վճարելու որոշումն ընդունելու պահի դրությամբ Հնկերության տնտեսական վիճակը համապատասխանում է օրենքով սահմանված անվճարունակության (սնանկության) հայտանիշներին, կամ դրանք ի հայտ կգան շահութաբաժինների վճարման հետևանքով.

գ) Հնկերության գուտ ակտիվների արժեքը պակաս է Հնկերության կանոնադրական կապիտալից կամ կապիտալի շահութաբաժինների վճարման հետևանքով:

8. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ

8.1. Ժողովն Հնկերության կառավարման բարձրագույն մարմինն է: Հնկերությունը պարտավոր է ամեն տարի գումարել ժողով՝ Տարեկան ժողով:

Տարեկան ժողովը գումարվում է հերթական ֆինանսական տարվա ավարտից 2 ամիս հետո 4 ամսվա ընթացքում:

Տարեկան ժողովից բացի գումարվող ժողովները համարվում են արտահերթ: Հնկերության արտահերթ ժողովներ գումարվում են անհետաձգելի հարցերի քննարկման համար:



ՏԻԿԱ

ՀՀ ՍՊԻՐԻՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ ԵՎ ԲԱԿԱՆԱԿՆԵՐԻ ԿՈՐԴԻՆԱՏՈՐԱՏԻ



Ընկերության բաժնետերերի ինչպես տարեկան, այնպես էլ արտահերթ ընդհանուր ժողովները գումարվում են Ընկերության գործադիր տնօրենի կողմից սեփական նախաձեռնությամբ գրավոր որոշմամբ: Արտահերթ ընդհանուր ժողովը կարող է գումարվել նաև Ներքին աուդիտի, Ընկերության աուդիտի իրականացնող անձի կամ պահանջը ներկայացնելու դրությամբ Ընկերության՝ առնվազն 10 տոկոս քվեարկող բաժնետոմսերի սեփականատեր բաժնետերերի (բաժնետերերի) պահանջով: Եթե Օրենքով սահմանված ժամկետում Գործադիր տնօրենը արտահերթ ժողովի գումարման մասին որոշում չի ընդունում կամ որոշում է ընդունում դրա գումարումը մերժելու մասին, ապա արտահերթ ժողովը կարող են գումարել ժողովի գումարման մասին պահանջը ներկայացրած անձինք:

Ժողովը իրավասու է (քվեարում ունի) եթե նրա աշխատանքներին մասնակցում են (ժողովի մասնակիցների գրանցման ավարտի պահի դրությամբ) Ընկերության ձայնի իրավունք տվող տեղաբաշխված բաժնետոմսերի 50% տնօրինող բաժնետերեր, բացի Օրենքով և սույն կանոնադրությամբ սահմանված դեպքերից:

Ֆինդումի բացակայության դեպքում գումարվում է նոր ժողով, որը իրավասու է, եթե նրա աշխատանքներին մասնակցում են (ժողովի մասնակիցների գրանցման ավարտի պահի դրությամբ) Ընկերության ձայնի իրավունք տվող տեղաբաշխված բաժնետոմսերի 30% տնօրինող բաժնետերեր, բացի Օրենքով և սույն կանոնադրությամբ սահմանված դեպքերից:

Ժողովի գումարման մասին որոշմամբ պետք է սահմանվի.

- ա) ժողովի գումարման ամսաթիվը, տեղը և ժամանակը,
- բ) ժողովի օրակարգը,
- գ) ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմելու ամսաթիվը,
- դ) ժողովի գումարման մասին բաժնետերերին ծանուցելու կարգը,
- ե) ժողովի նախապատրաստման ընթացքում տրամադրվող տեղեկությունների և նյութերի ցուցակը,
- զ) ժողովի քարտուղարի անունը, ազգանունը,
- Վ) քվեաթերթիկների ձևը և բովանդակությունը, եթե քվեարկությունները կատարվելու են քվեաթերթիկներով:

Ժողովի ծանուցման ձև է սահմանվում ծանուցումը բաժնետերերին, ներքին աուդիտի անդամներին և Ընկերության աուդիտի իրականացնող անձին (եթե նրա եզրակացությունն առկա է գումարվող ժողովի կայքերում) պատվիրված կամակերպ ուղարկելու կամ անձամբ հանձնելու կամ էլեկտրոնային փոստով առաքելու ձևը:

Ընկերությունը պարտավոր է Ժողովի գումարման մասին իր բաժնետերերին սույն կետով սահմանված կարգով ծանուցել Ժողովի գումարման օրվանից առնվազն 15 օր առաջ:

Ժողովներում նախագահում է Գլխավոր տնօրենը, իսկ նրա բացակայության դեպքում՝ Ժողովը նախագահում է Ժողովին ներկա բաժնետերերից ամենատարեցը, եթե Ժողովի գումարման մասին որոշմամբ այլ անձ նշանակված չէ:

8.2. Ժողովի իրավասությանն են պատկանում՝

- 1. Կանոնադրության մեջ փոփոխությունների և լրացումների կատարումը,
- 2. Ընկերության վերակազմակերպումը,
- 3. Ընկերության լուծարումը,
- 4. Ընկերության լուծարման հանձնաժողովի նշանակումը, ամփոփ, միջանկյալ և լուծարման հաշվեկշիռների հաստատումը,
- 5. Խաբուսաբարված բանեղումների ծախսի առավելագույն չափի սահմանումը,
- 6. բաժնետոմսերի անվանական արժեքի մեծացման կամ լրացուցիչ բաժնետոմսերի տեղաբաշխման ճանապարհով Ընկերության կանոնադրական կապիտալի չափի ավելացումը.

7. տեղաբաշխված բաժնետոմսերի անվանական արժեքի փոքրացման, բաժնետոմսերի ընդհանուր քանակի կրճատման նպատակով տեղաբաշխված բաժնետոմսերի ձեռքբերման, ինչպես նաև Հնկերության կողմից ձեռք բերված կամ հետ գնված բաժնետոմսերի մարման ճանապարհով Հնկերության կանոնադրական կապիտալի չափի նվազեցումը,

8. Հնկերության կողմից տեղաբաշխված բաժնետոմսերի ձեռքբերումը և հետգնումը,

9. Հնկերության աուլիսն իրականացնող անձի հաստատումը,

10. Հնկերության սուբեկան հաշվետվությունների, հաշվապահական հաշվեկշիռների, շահույթների և վնասների հաշվի, շահույթների և վնասների բաշխման հաստատումը, սուբեկան շահութաբաժինների վճարման մասին որոշման ընդունումը և սուբեկան շահութաբաժինների չտրի հաստատումը,

11. բաժնետոմսերի անվանական արժեքի փոքրացումը (տարանջատումը) և մեծացումը (համախմբումը),

12. Հնկերության գույքի օտարման և ձեռքբերման հետ կապված խոշոր գործարքների կնքումը,

13. Հնկերության կողմից դուստր կամ կախյալ ընկերությունների ստեղծումը,

14. դուստր և կախյալ ընկերություններում մասնակցությունը,

15. հողինգային ընկերությունների, սուստրային կազմակերպությունների այլ միությունների հիմնադրումը,

16. հողինգային ընկերություններում, սուստրային կազմակերպությունների այլ միություններում մասնակցությունը:

17. Հնկերության գործադիր տնօրենի նշանակումը, նրա լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը, տնօրենի վարձատրության և ծախսերի փոխհատուցումների վճարման կարգի ու պայմանների սահմանումը:

Ժողովը իրավունք ունի քննարկել և որոշումներ ընդունել նաև Արժեթղթերի շուկայի մասին Հայաստանի Հանրապետության օրենքով, Օրենքով ու Կանոնադրությամբ Ժողովի իրավասությանը պատկանող գանկացած հարցի շուրջ:

8.3. Կանոնադրությամբ Ժողովի իրավասությանը վերապահված հարցերի լուծումը չի կարող փոխանցվել Գլխավոր տնօրենին, բացառությամբ 8.2. կետի 15 և 17 ենթակետերով նախատեսված դեպքերի:

8.4. Ժողովում ձայնի իրավունքից օգտվում են հասարակ բաժնետոմսեր ունեցող բաժնետերերը:

8.5. Ժողովի որոշումներն ընդունվում են ժողովին մասնակցող՝ քվեարկող բաժնետոմսերի սեփականատերերի ձայների պարզ մեծամասնությամբ, բացի 10.7. կետում սահմանված դեպքերից:

8.6. Կանոնադրության 8.2. կետի 2, 9, 11 - 14 ենթակետերով նախատեսված դեպքերում որոշումներն ընդունվում են Ժողովի կողմից Գլխավոր տնօրենի ներկայացմամբ:

8.7. Սույն կանոնադրության 8.2. կետի 1, 2, 3, 4, 5, 7, 12 ենթակետերով սահմանված հարցերի մասին որոշումներն ընդունվում են Ժողովի կողմից Ժողովին մասնակցող քվեարկող բաժնետոմսերի սեփականատերերի ձայների երեք քառորդով, ընդ որում 3 և 7 ենթակետերով սահմանված դեպքերում կողմ ձայների քանակը չպետք է պակաս լինի ընդհանուրի երկու երրորդից:

8.8. Ժողովի կողմից ընդունված որոշումների մասին տեղեկությունները, ինչպես նաև քվեարկության արդյունքները պետք է հաղորդվեն ընկերության բաժնետերերին (ըստ պահանջի) 45 օրվա ընթացքում:

8.9. Բաժնետերն իրավունք ունի դատական կարգով գանգատարկել Օրենքի, այլ իրավական ակտերի և Կանոնադրության պահանջների խախտմամբ Ժողովի կողմից ընդունված որոշումը, եթե նա չի մասնակցել Ժողովին կամ այդ որոշմանը դեմ է քվեարկել և որոշմամբ խախտվել են նրա օրինական շահերը և իրավունքները: Դատարանն իրավունք ունի ուժի մեջ թողնել Ժողովի որոշումը, եթե որոշումը բողոքարկող բաժնետիրոջ (բաժնետերերի) քվեարկության մասնակցելը չէր կարող ազդել քվեարկության արդյունքների վրա, յուրյ տված խախտումները էական չեն և որոշումը վնաս չի պատճառել որոշումը բողոքարկող բաժնետիրոջը (բաժնետերերին):

8.10. Ժողովի որոշումները (բացի 8.2. կետի 11-րդ ենթակետով սահմանված հարցերի վերաբերյալ որոշումներից) կարող են ընդունվել առանց Ժողովի գումարման՝ հեռակա կարգով քվեարկությամբ (հարցման միջոցով): 8.2. կետի 11-րդ ենթակետով սահմանված հարցերի քննարկումը և համապատասխան որոշումների ընդունումը տեղի է ունենում բացառապես Տարեկան ժողովներում: Եթե Տարեկան ժողով տեղի չի ունեցել կամ համապատասխան որոշումներ չեն ընդունվել, ապա հրավիրված արտահերթ ժողովում այլ հարցեր չեն կարող քննարկվել, բացի կայացված որոշումներով սլայմանավորված կանոնադրական կապիտալի նվազեցման դեպքերի: Հեռակա կարգով քվեարկությամբ ընդունված Ժողովի որոշումը օրինական ուժ ունի, եթե քվեարկությանը մասնակցել են Հնկերության քվեարկող բաժնետոմսերի սեփականատերերի կեսից ավելին: Հեռակա կարգով քվեարկությունը կատարվում է քվեաթերթիկների օգտագործմամբ, որոնք պետք է տրամադրվեն բաժնետերերին քվեաթերթիկները ընդունելու պահից առնվազն 30 օր շուտ:

8.11. Ժողովին մասնակցելու իրավունք ունեն Հնկերության տեղաբաշխված հասարակ (սովորական), բաժնետոմսերի սեփականատեր հանդիսացող բաժնետերերը իրենց պատկանող լրիվ վճարված սովորական բաժնետոմսերի քանակին և անվանական արժեքին համապատասխան ձայների քանակով: Ժողովին խորհրդակցական ձայնի իրավունքով կարող են մասնակցել նաև Գործադիր տնօրենը, ինչպես նաև ներքին աուդիտի անդամները և աուդիտն իրականացնող անձը: Ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմվում է Գործադիր տնօրենի կողմից սահմանված ամսաթվի դրությամբ՝ Հնկերության բաժնետերերի ռեեստրի տվյալների հիման վրա:

9. ԱՎԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆԵՐԸ

9.1. Հնկերության ընթացիկ գործունեության ղեկավարումն իրականացնում է Հնկերության գործադիր տնօրենը:

9.2. Գործադիր տնօրենը լուծում է բոլոր հարցերը, բացի Հնկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի բացառիկ իրավասություն հանդիսացող հարցերից: Գործադիր տնօրենը կազմակերպում է Հնկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի որոշումների կատարումը, հաշվետու է նրան և իրավունք չունի Հնկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի համար պարտադիր որոշումներ կայացնելու:

9.3. Հնկերության գործադիր տնօրենը պետք է գործի բարեխղճօրեն և ողջամիտ՝ ի շահ իր կողմից ներկայացվող Հնկերության: Նա պարտավոր է Հնկերության հիմնադիրների (մասնակիցների) պահանջով հատուցել իր կողմից Հնկերությանը պատճառած վնասները, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ սլայմանագրով:

9.4. Հնկերության գործադիր տնօրենը՝

ա) տնօրինում է Հնկերության գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները, գործարքներ է կնքում Հնկերության անունից.

բ) ներկայացնում է Հնկերությունը Հայաստանի Հանրապետությունում և արտասահմանում.

գ) գործում է առանց լիազորագրի.

դ) տալիս է լիազորագրեր.

ե) սահմանված կարգով կնքում է սլայմանագրեր, այդ թվում՝ աշխատանքային.

զ) բանկերում բացում է Հնկերության հաշվարկային (այդ թվում՝ արտարժույթային) և այլ հաշիվներ.

է) հաստատում է Հնկերության աշխատանքային ներքին կանոնակարգը, առանձնացված ստորաբաժանումների կանոնակարգերը, Հնկերության վարչակազմակերպական կառուցվածքը, հաստիքացուցակը.

ը) իր իրավասության սահմաններում արձակում է հրամաններ, հրահանգներ, տալիս է կատարման համար պարտադիր ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը.

բ) սահմանված կարգով աշխատանքի է ընդունում և աշխատանքից ազատում Հնկերության աշխատակիցներին

ժ) աշխատակիցների նկատմամբ կիրառում է խրախուսման և կարգապահական արտասխանատվության միջոցներ:

9.5. Հնկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի որոշմամբ Հնկերության գործադիր մարմնի (ինչպես միանձնյա, այնպես էլ կոլեգիալ) լիազորությունները պայմանագրով կարող են տրվել այլ անտարային կազմակերպության կամ անհատ ձեռնարկատիրոջ (կառավարչի):

10. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՀԱՅՈՒՄԸ ՆԵՐՔԻՆ ԵՎ ԱՐԺԵՊՅԵՐԻ (ԱՐԿԱՅԻ) ԱՈՒՂԻՏ

10.1. Հնկերության ֆինանսատնտեսական գործունեության վերահսկումն իրականացնում են Հնկերության ներքին աուդիտի ստորաբաժանումը և Հնկերության անկախ աուդիտ իրականացնող անձը:

10.2. Ներքին աուդիտի ստորաբաժանման լիազորությունները և պարտականությունները սահմանվում են «Արժեթղթերի շուկայի մասին» օրենքով, ՀՀ կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով և դրանց համապատասխան ընդունված Հնկերության ներքին իրավական ակտերով:

10.3. Հնկերության ընդհանուր ժողովը որոշում է ներքին աուդիտի ստորաբաժանման կազմը, ներքին աուդիտորների քանակը, նշանակում է Հնկերության ներքին աուդիտի անդամներին (անդամին) և ներքին աուդիտի ստորաբաժանման ղեկավարին:

10.4. Ներքին աուդիտի անդամները իրենց գործառույթները իրականացնում են «Արժեթղթերի շուկայի մասին» օրենքով, ՀՀ կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով և դրանց համապատասխան ընդունված Հնկերության ներքին իրավական ակտերով սահմանված պահանջներին համապատասխան:

10.5. Հնկերության ստեղծված ֆինանսական հաշվետվության հավաստիությունը վերատուգելու համար Հնկերությունը պարտավոր է ՀՀ օրենսդրությանը և ՀՀ կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերին համապատասխան ներգրավել Հնկերության կամ նրա մասնակիցների հետ գույքային շահերով չկապված արհեստավարժ աուդիտորի (արտաքին աուդիտ):

11. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿՑՈՒՂԵՐ ԵՎ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅՈՒՆՆԵՐ

11.1. ՀՀ տարածքում և նրանից դուրս Հնկերությունը կարող է «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով ստեղծել մասնաճյուղեր և հիմնել ներկայացուցչություններ, որոնց գործունեությունը կարգավորվում է ՀՀ նորմատիվ իրավական ակտերին համապատասխան ընդունված Հնկերության ներքին իրավական ակտերով:

12. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱՂՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼԸ

12.1. Հնկերության կանոնադրության մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու, ինչպես նաև Հնկերության նոր խմբագրությամբ կանոնադրության հաստատելը տեղի է ունենում Հնկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի որոշմամբ, որն ընդունվում է ժողովին մասնակցած քվեաբեկող բաժնետերերի ձայների 3/4-ով: Կանոնադրության փոփոխությունները ուժի մեջ են մտնում պետական գրանցումն իրականացնող մարմնի կողմից գրանցելու պահից:

12.2. Մասնաճյուղի և/կամ ներկայացուցչության ստեղծման կամ գործունեության դադարեցման հետ կապված տեղեկությունները մտցվում են Հնկերության կանոնադրության մեջ:

13. ԱՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱԶՄԱՎՈՐՈՒՄԸ ԵՎ ԼՈՒԾԱՐՈՒՄԸ

13.1. Ընկերությունը լուծարվում է «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքով և Օրենքով սահմանված դեպքերում՝ Արժեթղթերի շուկայի մասին ՀՀ օրենքով և այլ օրենքներով սահմանված կարգով և պահանջներին համապատասխան:

13.2. Ընկերության լուծարման և լուծարային հանձնաժողովի ստեղծման մասին որոշումը կայացնում է Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովը՝ սույն կանոնադրության 8.10 կետով սահմանված ձայների քանակով:

13.3. Նախքան լուծարման մասին որոշում ընդունելն Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովը պետք է հաստատի Ընկերության տնօրենի կոցմից ներկայացված ամփոփիչ հաշվեկշիռը և Ընկերության լուծարման նախագիծը:

13.4. Ընկերությունը կարող է վերակազմակերպվել բացառապես մեկ այլ ներդրումային ընկերությանը միանալու կամ վերակազմավորվելու ձևով՝ համաձայն «Արժեթղթերի շուկայի մասին» օրենքի և Օրենքի:

a

Հան ակտի կոդ: 520-20230111-65-6583724

Հան ակտի գաղտնագիր: ELB0ZO



Արցման մակագրության փաստաթղթերի
մի իսկությունը վավերացնելու մասին:

Ես, հազար քսաներեք թվականի հունվարի տասնմեկ, ես, Հայաստանի Հանրապետության
մեծ և Նոտարական տարածքի Նոտար՝ Էլմիրա Դանիելյանս, վավերացնում եմ սույն պատճենի
սպատասխանությունը բնօրինակին՝ առանց փաստաթղթում շարադրված փաստերը
տատելու:

Բնօրինակ փաստաթղթում ուղղումներ, ավելացումներ, ջնջված բառեր և այլ չձևոթագրված
ղումներ կամ այլ ուրիշ առանձնահատկություններ չհայտնաբերվեցին:

Անցված է գրանցամատյանում թիվ 287 ու

անձված է պետական տուրք երեք հազար երեք հարյուր ՀՀ դրամ և ծանուցվել է հարյուր վեց
հազար ՀՀ դրամ՝ համաձայն «Պետական տուրքի մասին» և «Նոտարիության մասին»
Հայաստանի Հանրապետության օրենքների:

Նոտար

Էլմիրա Գևորգի Դանիելյան





Հայտնի է, որ Կարեն Բենյամինյանը և Երվանդ Բենյամինյանը
համատեղում են իրենց կապիտալի մասնակցությունը
և համատեղում են իրենց կապիտալի մասնակցությունը
և համատեղում են իրենց կապիտալի մասնակցությունը

150

